Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-650[1]-27.10.2014-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (1985 թվականի դեկտեմբերի 6-ի այսուհետ՝ օրենսգիրք) 150^3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«Հոդված 150^3. Ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով ծանրաքաշ և/կամ մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով երթևեկելը՝

1.Հայաստանի Հանրապետության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհներով ծանրաքաշ և (կամ) մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցների երթևեկելը առանց այդ ճանապարհների տնօրինողի թույլտվության՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

2.Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներով՝ 44 տոննան ընդհանուր զանգվածը գերազանցող ծանրաքաշ բեռնատար տրանսպորտային միջոցների երթևեկությունը առանց փոխադրումների իրականացման հատուկ թույլտվության՝

առաջացնում է տուգանքի նշանակում մինչև մեկ տոննա և ավել յուրաքանչյուր տոննայի համար սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

3. Հայաստանի Հանրապետության ավտոմոբիլային ճանապարհներով մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը 11.5 տոննան գերազանցող ծանարաքաշ տրանսպորտային միջոցների երթևեկությունը առանց փոխադրումների իրականացման հատուկ թույլտվության՝

առաջացնում է տուգանքի նշանակում մինչև հինգ հարյուր կիլոգրամ և ավել յուրաքանչյուր հինգ հարյուր կիլոգրամի համար սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 305-րդ հոդվածի վերջում ավելացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ՝

Սույն օրենսգրքի 150^3–րդ հոդվածով գանձվող տուգանքները փոխանցվում են՝ Հայաստանի Հանրապետության միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհներին արձանագրված խախտումների համար՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական գանձապետարան, իսկ մարզային ավտոճանապարհներին արձանագրված խախտումների համար՝ համապատասխան համայնքի բյուջե:

Հոդված 3. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

N	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Վ. Այվազյան	1. «Ավտոմոբիլային ճանապարհների մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով լրացվող՝ օրենքի 10-րդ հոդվածի 6.3-րդ մասի 1-ին կետում հստակեցնել մատնանշված թերությունների վերացման սահմանված ժամկետները:	Առաջարկությունը ընդունված չէ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 866-րդ հոդվածով արդեն կարգավորված է հարցը, իսկ <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի համաձայն իրավական ակտում պետք է բացառվեն իրավական նորմերի անհիմն կրկնությունները, ներքին հակասությունները:
2.	ՀՀ ԱԺ պատգամավոր Վ. Այվազյան	1. Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով լրացվող՝ օրենքի 10-րդ հոդվածի 6.3-րդ մասի 6-ին կետից հետո լրացնել նոր 7-րդ և 8-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ՝ «7) հատուկ թույլտվության հայտը մերժելու վերաբերյալ որոշման մեջ հստակ պետք է նշվեն մերժման պատճառներն ու իրավական հիմքերը: 8) հատուկ թույլտվության հայտի մերժման դեպքում հայտատուն իրավունք ունի հատուկ թույլտվություն ստանալու նոր հայտ ներկայացնել ընդհանուր կարգով»:	Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: